ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2018թ. N---Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2019 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ.

1) հողամասերն օգտագործման, այդ թվում՝ սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) տրամադրելու և օտարման հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման հողային, քաղաքացիական օրենսգրքերին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմանը և հողային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերին համապատասխան.

2) հողամասերի կամ դրանց առանձին հատվածների (մասերի) աճուրդով վաճառքի մեկնարկային գինը չի կարող պակաս լինել հողամասի կադաստրային արժեքից.

3) ինքնակամ կառույցների օտարման կամ օգտագործման տրամադրելու հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմանը համապատասխան.

4) քանդման ենթակա վթարային բազմաբնակարան շենքերի, բնակելի տների և հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչների բնակարանային խնդիրների լուծման նպատակով, համայնքային և (կամ) պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին կառուցված և համայնքային սեփականություն հանդիսացող բազմաբնակարան շենքերի բնակարանների հատկացման կամ այդ բնակարանների տնօրինման հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման

«Երևան քաղաքի քանդման ենթակա վթարային հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչներին բնակարաններ հատկացնելու կարգը հաստատելու մասին» N 172-Ն և 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին» N 682 որոշումներին համապատասխան.

5) հողամասերն անհատույց օգտագործման, վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում են մինչև 99 տարի ժամկետով, բացառությամբ՝ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Հողամասերի սահմանափակ օգտագործումը (սերվիտուտ) կարող է լինել ժամանակավոր՝ մինչև 99 տարի ժամկետով, կամ մշտական.

6) հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած ներդրումային ծրագրերի իրականացման համար հողամասերի ուղղակի վաճառքի դեպքում ձեռք բերողների համար կարող է սահմանվել նաև տարաժամկետ վճարման իրավունք.

7) հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրվում է հողային օրենսգրքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի ----ի
N ---Ն որոշման

ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքի (հողամասեր, բնակարաններ, ոչ բնակելի տարածքներ, շենքեր և շինություններ, ինքնակամ կառույցներ և այլ անշարժ ու շարժական գույք, գույքային իրավունք, իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում մասնակցություն) (այսուհետ՝ նաև Գույք) օգտագործման տրամադրելու և օտարման 2019 թվականի ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) նպատակաուղղված է Երևան համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման, բյուջետային քաղաքականության ուղղություններով սահմանված խնդիրների և Երևան համայնքի բնակիչների բնակարանային հարցերի լուծմանը:

2. 2019 թվականի ընթացքում Գույքի օգտագործման, այդ թվում՝ սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) տրամադրելու, հավատարմագրային կառավարման հանձնելու և օտարման հիմնական նպատակներն են.

1) Գույքի օգտագործման, այդ թվում՝ սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) արդյունավետության բարձրացումը.

2) Գույքի օտարումից, ինչպես նաև վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով կամ հավատարմագրային կառավարման հանձնելուց ստացված միջոցների հաշվին Երևանի բյուջեում եկամուտների ապահովումն ու ավելացումը:

3. Գույքը կարող է տրամադրվել անհատույց օգտագործման կամ անհատույց օտարվել կամ փոխանակվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ՝ բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի և 41-րդ կետի 4-րդ ենթակետի:

4. Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են Երևանի քաղաքապետի որոշմամբ սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել (օտարվել) այն անձին (անձանց) կամ ընտանիքներին, որոնք՝

1) «Հայաստանի Հանրապետության պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» և «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» օրենքներին համապատասխան հանդիսացել են սեփականաշնորհման (մասնավորեցման) սուբյեկտ և (կամ) վարձակալ, դրանց գործողության ժամանակահատվածում չեն սեփականաշնորհել (մասնավորեցրել) իրենց բնակարանները կամ բնակելի տները, ներկայումս հաշվառված ու մշտապես (փաստացի) բնակվում են այդ բնակարաններում կամ բնակելի տներում.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության, պետական այլ մարմինների կամ Երևանի քաղաքապետի կամ Երևանի թաղային համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների և կարգադրությունների կամ պետական մասնակցությամբ ընկերությունների (պետական ձեռնարկությունների) կողմից տրամադրված օրդերների (այլ փաստաթղթերի) կամ սահմանված կարգով ուժի մեջ մտած դատական ակտերի հիման վրա մշտապես (փաստացի) բնակվում են դրանցում.

3) վերաբնակեցվել են վթարային քանդման ենթակա շենքերից, բնակելի տներից և նորակառույց շենքերի բնակարանները տիրապետում և օգտագործում են՝ պայմանագրերին համապատասխան.

4) բազմազավակ են, ունեն 6 և ավելի երեխաներ, չունեն սեփական բնակարան, բնակելի տուն կամ ունեն բնակարանային պայմանների (այսուհետ՝ բնակպայմաններ) բարելավման կարիք.

ներդրում ունեցող արվեստի, մշակույթի և այլ ոլորտների ականավոր գործիչներ են, որոնք (նրանց ընտանիքների անդամները) չունեն սեփական բնակարան կամ ունեն բնակպայմանների բարելավման կարիք.

6) 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած այն անձանց, ովքեր բնակարաններում, բնակելի տներում և բնակելի տարածքներում բնակվում և հաշվառված են (այդ թվում փաստացի) 10 տարվանից ավելի.

7) վերաբնակեցվում են քանդման ենթակա վթարային բնակելի տներից, բազմաբնակարան և հանրակացարանային բնակելի շենքերի բնակարաններից Հայաստանի Հանրապետության կամ Երևան համայնքի բյուջեից հատկացված միջոցների հաշվին կառուցված բազմաբնակարան շենքերի բնակարաններ, ընդ որում՝ բնակարանների հատկացման կամ այդ բնակարանների տնօրինման հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին» N 682, 2009 թվականի փետրվարի 5-ի «Երևան քաղաքի քանդման ենթակա վթարային հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչներին բնակարաններ հատկացնելու կարգը հաստատելու մասին» N 172-Ն որոշումներով ամրագրված սկզբունքներին և (կամ) պայմաններին համապատասխան:

Սույն ենթակետով նախատեսվող բնակարանները հատկացվում եմ սեփականության իրավունքով:

5. Սույն Ծրագրի իմաստով 4-րդ կետում նշված «բնակպայմանների բարելավման կարիք» ունեցող է համարվում այն անձը (անձինք) կամ ընտանիքը, որոնց ընդհանուր համատեղ կամ բաժնային սեփականություն հանդիսացող բնակելի տանը կամ բնակարանում կամ այլ բնակելի տարածքում մեկ անձին հասանելիք բնակելի տարածքի բաժնեմասը չի գերազանցում 9.0 քառ. մետր մակերեսը և իրենք կամ իրենց հետ համատեղ բնակվող անձինք (ծնողները, ամուսինը և երեխաները) վերջին հինգ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում չեն օտարել բնակելի տուն կամ բնակարան կամ այլ բնակելի տարածք:

6. Երևանի քաղաքապետի Գույք օտարելու որոշմամբ այն ձեռք բերողին կարող է տրվել տարաժամկետ վճարման իրավունք:

7. Գույքի օտարումն իրականացվում է հետևյալ ձևերով՝

1) աճուրդ.

2) մրցույթ.

3) ուղղակի վաճառք:

8. Գույքի օտարման ձևի մասին որոշումն ընդունում է Երևանի քաղաքապետը:

9. Գույքը հրապարակային սակարկություններով օտարման ներկայացնելիս ընտրվում է մրցույթով վաճառքի ձևը, եթե Գույքի գնորդը սեփականության իրավունքի ձեռքբերման հետ մեկտեղ Գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման հետ կապված պետք է ստանձնի որոշակի պարտավորություններ:

10. Գույքը հրապարակային սակարկություններով օտարման ներկայացնելիս ընտրվում է աճուրդով վաճառքի ձևը, եթե գնորդից չի պահանջվելու կատարել Ծրագրի 9-րդ կետում նշված պարտավորությունները:

11. Գույքը (բացառությամբ՝ հողամասերի) օտարվում է ուղղակի վաճառքի ձևով՝

1) տվյալ Գույքի նկատմամբ օգտագործման իրավունք ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձին (անձանց), եթե Երևանի քաղաքապետի որոշմամբ այլ բան սահմանված չէ.

2) ձեռք բերողներին՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում.

3) այն ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնք փաստացի տիրապետում և օգտագործում են իրենց բնակարաններին և տարածքներին անմիջապես կից ոչ բնակելի տարածքները, որոնց մուտքերը բացառապես բնակարաններից և տարածքներից են և դրանք այլ մուտք չունեն.

4) Ծրագրի 46-րդ կետով նախատեսված դեպքում.

5) սոցիալական կամ բարեգործական կամ Երևան քաղաքի ավագանու հավանությանն արժանացած ներդրումային ծրագրեր իրականացնելու կամ Երևան քաղաքի ավագանու որոշմամբ հաստատված՝ այլ քաղաքների և այլ վարչատարածքային միավորների հետ համագործակցության մասին պայմանագրերից

ապահովման նպատակով՝ Երևան քաղաքի ավագանու որոշմամբ: Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշմամբ և Գույքի ուղղակի վաճառքի պայմանագրում պետք է սահմանվեն իրականացվելիք ծրագրերը կամ ներդրման չափն ու պայմանները, ինչպես նաև Գույքի ուղղակի վաճառքի պայմանագրի պայմանների խախտման համար պատասխանատվությունը:

12. Գույքը հավատարմագրային կառավարման է հանձնվում Երևան քաղաքի ավագանու որոշմամբ:

13. Գույքի օտարումից ստացված միջոցներն ուղղվում են Երևան համայնքի բյուջե:

II. ՕՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

14. Գույքի գնահատումն իրականացվում է՝

1) անշարժ Գույքի դեպքում՝ «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» օրենքին համապատասխան.

2) այլ Գույքի դեպքում՝ անկախ գնահատողի կողմից:

15. Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման նախորդ ծրագրերի շրջանակներում գնահատված Գույքի գնահատման ժամկետը մեկ տարի գերազանցելու դեպքում Գույքը կարող է կրկին գնահատվել՝ Ծրագրի 14-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված կարգով:

16. Գույքի օտարման որոշումը պետք է ներառի տեղեկություններ՝

1) Գույքի նկարագրության, դրա գնահատման տարեթվի և ամսաթվի մասին.

2) օտարման ձևի, այդ թվում՝ որպես Գույքի մեկ միավոր կամ որպես Գույքի առանձին տարրեր օտարելու մասին.

3) Գույքն աճուրդով (մրցույթով) վաճառքի ներկայացնելու ժամանակ՝ չվաճառվելու դեպքում հաջորդ աճուրդի (աճուրդների) կամ մրցույթի (մրցույթների) կազմակերպման նպատակահարմարության և յուրաքանչյուր հերթական աճուրդում (մրցույթում) Գույքը չվաճառվելու դեպքում հաջորդ աճուրդի (մրցույթի) ժամանակ մեկնարկային (վաճառքի նվազագույն) գնի իջեցման չափի մասին, որը պետք է լինի վերջին կազմակերպված աճուրդի (մրցույթի) մեկնարկային (վաճառքի նվազագույն) գնի 10 տոկոսի չափով.

4) Գույքն ուղղակի վաճառքի ներկայացնելու ժամանակ՝ գնորդի անունը կամ անվանումը, օտարվող Գույքի վաճառքի գնի, վճարման համար օգտագործվող միջոցների և վճարման ժամկետների մասին.

5) առկայության դեպքում այլ տվյալների մասին:

17. Գույքի մրցույթով օտարման մասին Երևանի քաղաքապետի որոշմամբ կարող են սահմանվել նաև՝

1) մրցույթի հաղթողին որոշելու պայմանների գնահատման կշռային գործակիցներ.

2) մրցույթի մասնակիցների նախնական որակավորման պահանջ:

III. ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

18. Գույքի վաճառքի նպատակով աճուրդը և մրցույթը կազմակերպում ու անցկացնում է Երևանի քաղաքապետի որոշմամբ ստեղծված հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով)՝ Երևանի քաղաքապետի որոշմամբ հաստատված կարգի համաձայն:

19. Աճուրդով Գույքի օտարման դեպքում Երևանի քաղաքապետի որոշմամբ սահմանվում են աճուրդի ձևը, Գույքը ենթակա է օտարման ամբողջությամբ կամ առանձին լոտերով, օտարվող Գույքի մեկնարկային գինը և աճուրդի իրականացման ժամկետները:

20. Երևանի քաղաքապետի որոշմամբ մրցույթի հաղթողին որոշելու նպատակով կարող են առաջադրվել հետևյալ պայմանները՝

1) գինը.

2) ներդրումների չափը.

3) առկայության դեպքում այլ պայմաններ:

կազմակերպությունները կամ դրանց աշխատակիցներից ստեղծված հանձնաժողովները, աշխատանքային խմբերը հանձնաժողովին են ներկայացնում՝

1) վաճառքի ենթակա Գույքի ցանկը, որտեղ պետք է նշված լինի յուրաքանչյուր Գույքի լրիվ անվանումը, գտնվելու վայրը, սկզբնական, հաշվեկշռային և (կամ) գնահատված արժեքները՝ արտահայտված դրամով.

2) տեղեկություններ օտարվող Գույքի վիճակի մասին և այլ տեղեկություններ՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի և (կամ) Երևանի ենթակայության կազմակերպությունների հայեցողությամբ:

22. Գույքն ուղղակի վաճառքով օտարման ներկայացվելու դեպքում Գույքի վաճառքի գինը սահմանվում է Ծրագրի 14-րդ կետով սահմանված կարգով գնահատված արժեքի 100 տոկոսի չափով: Գույքը սույն կետով չօտարվելու դեպքում ենթակա է օտարման՝ աճուրդով կամ մրցույթով՝ սույն գլխով սահմանված կարգով:

23. Գույքն աճուրդով կամ մրցույթով օտարման ներկայացվելու դեպքում Գույքի առաջին աճուրդով վաճառքի մեկնարկային կամ առաջին մրցույթով վաճառքի նվազագույն գինը սահմանվում է Ծրագրի 14-րդ կետով սահմանված կարգով գնահատված արժեքի 100 տոկոսի չափով, որը ներկայացվում է Երևանի քաղաքապետի հաստատմանը հանձնաժողովի կողմից:

24. Գույքի մեկնարկային (վաճառքի նվազագույն) գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի (մրցույթի) ժամանակ կարող է նվազեցվել նախորդ (վերջին) աճուրդի (մրցույթի) մեկնարկային գնի 10 տոկոսի չափով, սակայն ոչ ավելի, քան Գույքի գնահատված արժեքի 50 տոկոսի չափով:

25. Ծրագրի 18-րդ կետում նշված հանձնաժողովը Գույքի օտարման մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 15 օրվա ընթացքում 1000 օրինակից ոչ պակաս տպաքանակ ունեցող մամուլում, http://www.azdarar.am հասցեում և (կամ) Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում հրապարակում է Գույքի աճուրդով (մրցույթով) վաճառքի մասին հայտարարությունը, ընդ որում, աճուրդն անցկացվում է հայտարարության հրապարակմանը հաջորդող 15-րդ օրվանից, իսկ մրցույթը՝ 30-րդ օրվանից ոչ շուտ:

26. Աճուրդին (մրցույթին) մասնակցելու համար մասնակցի կողմից վճարվում է՝

1) նախավճար՝ մեկնարկային (վաճառքի նվազագույն) գնի 5 տոկոսի չափով, որը հաղթող մասնակցի համար համարվում է Գույքի վաճառքի գնի մաս և չի վերադարձվում, եթե հաղթող մասնակիցը հրաժարվում է հետագա վճարումները կատարելուց, իսկ չհաղթող մասնակցին վերադարձվում է վերջինիս դիմելուց հետո՝ եռօրյա ժամկետում.

2) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության վճար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

3) հողամասերի դեպքում՝ համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար:

27. Աճուրդի (մրցույթի) մասնակցության համար միայն մեկ հայտ ներկայացնելը հիմք չի հանդիսանում աճուրդը (մրցույթը) չկայացած համարելու համար:

28. Հրապարակային սակարկությունների (աճուրդ և մրցույթ) անցկացման, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված կարգի 37-րդ կետով նախատեսված դեպքում ինքնակամ կառույցի հրապարակային սակարկություններով օտարման կամ օգտագործման տրամադրելու կարգերը, սահմանում է Երևանի քաղաքապետը:

IV. ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՍԵՐՎԻՏՈՒՏ) ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

29. Սույն գլխով կարգավորվում է Գույքի օգտագործման, այդ թվում՝ սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) տրամադրելու հարցերը, Գույքի վարձակալության, կառուցապատման և սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) վարձավճարների չափերը:

30. Ծրագրի 29-րդ կետում նշված՝ վարձակալության տրամադրվող Գույքի (տարածքի) ամսական վարձավճարի չափը որոշվում է համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի վարձակալության, ինչպես նաև մինչև մեկ տարի ժամկետով պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի վարձակալության տրամադրման գործընթացը կանոնակարգելու մասին» N 125 որոշման, իսկ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ կառուցված և համայնքի ղեկավարի որոշման հիման վրա օրինական ճանաչված ավտոտնակների դեպքում՝ շինության կադաստրային արժեքի 0,2 տոկոսի չափով:

31. Գույքը (տարածքը) վարձակալության է տրամադրվում ուղղակի կամ աճուրդի կամ մրցույթի ձևով:

32. Վարձակալության տրամադրվող Գույքի (տարածքի) վերաբերյալ հայտարարությունները պարբերաբար ներկայացվում են մամուլում, http://www.azdarar.am հասցեում և (կամ) Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում:

33. Գույքը (տարածքը) վարձակալության է տրամադրվում ուղղակի ձևով, եթե առկա է հետևյալ դեպքերից որևէ մեկը՝

1) եթե՝ համայնքի ինչպես սեփականության իրավունքի պետական գրանցում ունեցող, այնպես էլ սեփականության իրավունքի գրանցում չունեցող անշարժ գույքի վարձակալները (որոնց հետ ստորագրված վարձակալության պայմանագրերը նոտարական վավերացում չեն ստացել, կամ այդ պայմանագրերը նոտարական վավերացում ստացել են, սակայն սահմանված ժամկետներում անշարժ գույքի օգտագործման իրավունքի պետական գրանցում չեն ստացել) ամբողջությամբ վճարել են կամ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կողմից հաշվարկված վճարները վճարելու և վարձակալական պայմանագիր կնքելու մասին գրավոր առաջարկություն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում կվճարեն հաշվարկված վճարները,

2) եթե տվյալ Գույքի վարձակալը պայմանագրի գործողության ամբողջ ժամկետում կատարել է պայմանագրով ստանձնած բոլոր պարտավորությունները առանց խախտումների,

3) եթե մամուլում, http://www.azdarar.am հասցեում և (կամ) Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում հայտարարության հրապարակումից հետո առաջին հայտը ներկայացվելու օրվանից 10-օրյա ժամկետում այլ հայտեր չեն ներկայացվել և դիմողը միանվագ վճարում է առնվազն 3 ամսվա համար հաշվարկված վարձավճարը,

4) Ծրագրի 46-րդ կետով նախատեսված դեպքում:

34. Ծրագրի 33-րդ կետում նշված դեպքերում Գույքը (տարածքը) վարձակալության է տրամադրվում աճուրդով կամ մրցույթով, ընդ որում՝ վարձավճարի մեկնարկային նվազագույն գինը որոշվում է ծրագրի 30-րդ կետով սահմանված կարգի համաձայն որոշված վարձավճարի չափով:

35. Սահմանափակ օգտագործման իրավունքով (սերվիտուտ) հողամասերը տրամադրվում են սերվիտուտ պահանջող անձի և Երևան համայնքի միջև կնքված պայմանագրով:

36. Վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասերի տարեկան վարձավճարի չափը 1 քմ մակերեսի համար սահմանվում է հողամասերի կադաստրային արժեքի՝

1) հողի վարձակալության դեպքում՝

ա. սրճարանների զբաղեցրած հողամասերի համար՝ 10 տոկոս.

բ. բենզալցման և գազալցման կայանների զբաղեցրած հողամասերի համար՝ 20 տոկոս.

գ. տաղավարների, կրպակների, ինչպես նաև հասարակական այլ շինությունների զբաղեցրած հողամասերի համար՝ 5 տոկոս.

դ. ավտոտնակների զբաղեցրած հողամասերի համար՝ 3 տոկոս.

տոկոս.

զ. էներգետիկայի, կապի և այլ ենթակառուցվածքների զբաղեցրած հողամասերի համար՝ 5 տոկոս, բացառությամբ ««Երևանի էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցման մասին» օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված դեպքի.

է. գովազդային վահանակներով զբաղեցված հողամասերի համար՝ 40 տոկոս.

ը. գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝ գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային միջին զուտ եկամտի 10 տոկոսի չափով.

թ. ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց տրամադրված լեռնահատկացման ակտի սահմաններում գտնվող հողամասերի, բացառությամբ հանքավայրով (տեղամասով) զբաղեցրած հողամասի համար՝ 3 տոկոս.

ժ. ընդերքօգտագործման իրավունք ունեցող և ընդերքը շահագործող անձանց ընդերքօգտագործման պայմանագրով տրամադրված ընդերքի տեղամասերի հանքավայրով (տեղամասով) զբաղեցրած հողամասերի համար՝ 7 տոկոս.

ժա. բանկոմատով զբաղեցված հողամասերի համար՝ 100 տոկոս,

ժբ. տերմինալով զբաղեցված հողամասերի համար՝ 200 տոկոս,

ժգ. ծաղիկների վաճառքի կետի զբաղեցրած հողամասերի համար՝ 80 տոկոս,

ժդ. սառնարաններով զբաղեցված հողամասերի համար՝ 20 տոկոս,

ժե. սուրճի, զովացուցիչ հյութերի, ջրի և այլ դիսպենսերների զբաղեցրած հողամասերի համար՝ 100 տոկոս, ընդ որում Ծրագրի 36-րդ կետի 1-ին ենթակետի <<ժա>>, <<ժբ>>, <<ժգ>> և <<ժե>> պարբերությունների համաձայն տրամադրման ենթակա հողամասերի նվազագույն մակերեսը չի կարող պակաս լինել 1 /մեկ/ քառակուսի մետրից,

ժզ. բջջային կայաններով, ալեհավաքներով զբաղեցրած հողամասերի համար՝ 80 տոկոս,

ժէ. այլ հողերի դեպքում՝ 3 տոկոս,:

2) կառուցապատման իրավունքով տրամադրելու դեպքում՝

ա. սրճարանների զբաղեցրած հողամասերի համար՝ 10 տոկոս.

բ. բենզալցման և գազալցման կայանների զբաղեցրած հողամասերի համար՝ 20 տոկոս.

գ. տաղավարների, կրպակների, ինչպես նաև հասարակական այլ շինությունների զբաղեցրած հողամասերի համար՝ 5 տոկոս.

դ. ավտոտնակների զբաղեցրած հողամասերի համար՝ 3 տոկոս.

ե. արտադրական նպատակային նշանակության տարածքների զբաղեցրած հողամասերի համար՝ 3 տոկոս.

զ. էներգետիկայի, կապի և այլ ենթակառուցվածքների զբաղեցրած հողամասերի համար՝ 5 տոկոս.

է. գովազդային վահանակներով զբաղեցված հողամասերի համար՝ 40 տոկոս.

ը. ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց տրամադրված լեռնահատկացման ակտի սահմաններում գտնվող հողամասերի, բացառությամբ հանքավայրով (տեղամասով) զբաղեցրած հողամասի, համար՝ 3 տոկոս.

թ. ընդերքօգտագործման իրավունք ունեցող և ընդերքը շահագործող անձանց ընդերքօգտագործման պայմանագրով տրամադրված ընդերքի տեղամասերի հանքավայրով (տեղամասով) զբաղեցրած հողամասերի համար՝ 7 տոկոս.

ժ. բանկոմատով զբաղեցրած հողամասերի համար՝ 100 տոկոս.

ժա. բջջային կայաններով, ալեհավաքներով զբաղեցրած հողամասերի համար՝ 80 տոկոս,

ժբ. այլ հողերի դեպքում՝ 3 տոկոս:

37. Սահմանել, որ սահմանափակ օգտագործման իրավունքով (սերվիտուտ) տրամադրվող հողամասերի տարեկան վարձավճարը հաշվարկվում է հողամասերի հողի հարկի տարեկան դրույքաչափին հավասարեցված վճարով:

38. Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հենասյուների օգտագործման համար ամսական վարձավճարներ սահմանել՝

1) մինչև 1 քմ ընդհանուր մակերեսով գովազդային միջոցների համար՝ չորս հազար դրամ.

յուրաքանչյուր 1 քմ մակերեսի համար.

3) 2 քմ-ից մինչև 3 քմ ներառյալ ընդհանուր մակերեսով գովազդային միջոցների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ՝ յուրաքանչյուր 1 քմ մակերեսի համար.

4) 3 քմ և ավելի ընդհանուր մակերեսով գովազդային միջոցների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ՝ յուրաքանչյուր 1 քմ մակերեսի համար.

5) յուրաքանչյուր մեկ միավոր օպտիկամանրաթելային մալուխ անցկացնելու համար՝ ամսական յոթ հարյուր քսան դրամ:

39. Սույն որոշման 38-րդ կետի 1-4-րդ ենթակետերով նախատեսված վարձավճարները հաշվարկելիս կիրառել հետևյալ գործակիցները՝

1) Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների տարածքում՝ 1 գործակից,

2) Նոր Նորք վարչական շրջանի տարածքում՝ 1 գործակից (Մյասնիկյան պողոտա՝ 2 գործակից),

3) Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում՝ 1.5 գործակից (Իսակովի պողոտա, Էջմիածնի խճուղի, Զվարթնոց օդանավակայան՝ 2 գործակից),

4) Արաբկիր և Կենտրոն վարչական շրջանների տարածքում՝ 2 գործակից:

40. Հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ հանրային սննդի օբյեկտին հարակից, Երևան համայնքին պատկանող ընդհանուր օգտագործման տարածքներում հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային (մարտի մեկից մինչև նոյեմբերի մեկը) ծառայությունների կազմակերպման համաձայնությունը տալիս է Երևանի քաղաքապետը՝ սահմանելով տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները:

Սույն կետով նախատեսված համաձայնության վերաբերյալ կնքվում է համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագիր, վարձավճարի չափը սահմանելով տվյալ տարածքի հողամասի կադաստրային արժեքի 10 տոկոսի չափով՝ տվյալ սեզոնի համար:

41. 2019 թվականի ընթացքում.

1) օգտագործման (վարձակալության կամ կառուցապատման) կամ սահմանափակ օգտագործման իրավունքով /սերվիտուտ/ կարող են տրամադրվել այն հողամասերը, որոնք մինչև Ծրագրի հաստատվելը տրված են եղել վարձակալության և (կամ) կառուցապատման կամ սահմանափակ օգտագործման /սերվիտուտ/ իրավունքով և 2019 թվականի ընթացքում ավարտվում է վարձակալության և (կամ) կառուցապատման կամ սահմանափակ օգտագործման իրավունքով /սերվիտուտ/ պայմանագրերի գործողության ժամկետը, ինչպես նաև հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված քաղաքացիներին և իրավաբանական անձանց չփոխանցվող հողամասերը.

2) վարձակալության կարող է տրամադրվել Երևանի Բուզանդի 1/3 հասցեում գտնվող շենքի տարածքները, Երևան քաղաքի ստորգետնյա անցումները, այլ շենքերն ու շինությունները.

3) օգտագործման (վարձակալության կամ կառուցապատման) կամ սահմանափակ օգտագործման իրավունքով /սերվիտուտ/ կարող են տրամադրվել այն շենքերը, շինությունները կամ դրանց տարածքները, որոնք մինչև Ծրագրի հաստատվելը տրված են եղել վարձակալության և (կամ) կառուցապատման կամ սահմանափակ օգտագործման /սերվիտուտ/ իրավունքով և 2019 թվականի ընթացքում ավարտվում է վարձակալության և (կամ) կառուցապատման կամ սահմանափակ օգտագործման իրավունքով /սերվիտուտ/ պայմանագրերի գործողության ժամկետը.

4) Գույքը (տարածքը) անհատույց օգտագործման կարող է հանձնվել Երևանի քաղաքապետի որոշմամբ, բացառապես Երևանի ենթակայության կազմակերպություններին:

42. Գույքի օգտագործման, այդ թվում՝ սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) տրամադրելուց ստացված միջոցներն ուղղվում են Երևան համայնքի բյուջե:

43. Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու գործընթացը կանոնակարգվում է Երևանի քաղաքապետի որոշմամբ:

V. 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ) ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՒՅՔ

44. 2019 թվականին օտարման և օգտագործման (կառուցապատման) տրամադրման է առաջարկվում.

հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2010-2018 թվականների ծրագրերում ընդգրկված, սակայն դեռևս չօտարված Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը և հողամասերը:

45. 2019 թվականին օտարման և (կամ) օգտագործման տրամադրման համար առաջարկվող գույքի ցանկում ընդգրկված է համարվում 2010-2018 թվականների ծրագրերում չընդգրկված և մինչև սույն Ծրագրի ընդունվելը և (կամ) Ծրագրի գործողության ընթացքում Երևան համայնքի անվամբ գրանցված գույքը, այդ թվում՝ համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցները, ինչպես նաև Երևան համայնքի սեփականությանն անցած անժառանգ գույքը, դրա բաժինը:

46. 2019 թվականին օտարման և (կամ) օգտագործման տրամադրման համար առաջարկվող գույքի ցանկում ընդգրկված է համարվում նաև Երևան համայնքի անվամբ գրանցման ենթակա կամ գրանցված այն շենքը (շինությունը), որի կառուցման կամ ստեղծման համար հատկացված անհրաժեշտ հողամասը տրամադրվել է կառուցապատման իրավունքով և այն օրենքով սահմանված կարգով դուրս է եկել հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների մեջ գտնվող հողամասերի ցանկից:

Տվյալ դեպքում շենքը (շինությունը) ու համապատասխան հողամասը կարող է ուղղակի ձևով օտարվել կամ տրամադրվել վարձակալության տվյալ հողամասի կառուցապատման իրավունք ունեցողին (կառուցապատողին), ընդ որում՝ ուղղակի վաճառքի դեպքում գույքի (շենք (շինություն) և հողամաս) օտարման գինը որոշվում է.

1) շենք (շինության) մասով Որոշման 4-րդ կետով և Որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով սահմանված գնի չափով, իսկ ավտոտնակների, կրպակների, տաղավարների և այլ համանման շինությունների մասով՝ Որոշման 4-րդ և Որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի «դ» ենթակետով սահմանված գնի եռապատիկի չափով,

2) հողամասի մասով՝ կադաստրային արժեքի եռապատիկի չափով:

47. Հողամասերի հրապարակային սակարկություններով տրամադրման և օտարման գործընթացը կանոնակարգվում է Երևանի քաղաքապետի որոշմամբ հաստատված ընթացակարգերի համաձայն:

48. Սահմանել, որ սույն Ծրագրում ընդգրկված հողամասերը ենթակա են օտարման աճուրդային կարգով, բացառությամբ՝ հողային օրենսգրքով և այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված հողամասերի սեփականության իրավունքով անհատույց փոխանցելու և ուղղակի վաճառքի դեպքերի:

49. Ծրագրում ընդգրկված օտարման ենթակա յուրաքանչյուր ծածկագրով հողամասերը կարող են օտարվել ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մաս առ մաս:

VI. 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՕՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐ

N	Վարչական շրջան	Ծածկագիր	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը	Գտնվելու վայրը	Օտարման եղանակը
1.	¸²ì Â²Þºü	01-004-308-058	µÝ³Ï³í³Ûñ»ñÇ	Ë³éÁ Ï³éáõóապատման	Òáñ 2 Ã³Õ³Ù³ëÇÝ Ñ³ñáÕ ï³ñ³ðù	
2.	¸²ì Â²Þºü	01-004-1166-001	µÝ³Ï³í³Ûñ»ñÇ	Ë³éÁ Ï³éáõóապատման	Òáñ 2 Ã³Õ³Ù³ëÇÝ Ñ³ñáÕ ï³ñ³ðù	
3.	¸²ì Â²Þºü	01-004-044-1114	µÝ³Ï³í³Ûñ»ñÇ	Ë³éÁ Ï³éáõóապատման	¸³íÃ³ß»ÝÇ 1-ÇÝ ÷áÕáóÇ 2-ñ¹ Ýñµ³Ýóù – ¸³íÃ³ß»ÝÇ 5 - ñ¹ ÷áÕáóÇ ÙÇçÝ³Ù³ëáõÙ	
4.	¸²ì Â²Þºü	01-004-009-666	µÝ³Ï³í³Ûñ»ñÇ	Ë³éÁ Ï³éáõóապատման	¸³íÃ³ß»ÝÇ 10-ñ¹ ÷áÕáóÇ – ¸³íÃ³ß»Ý 1Ã³Õ³Ù³ëÇ ÙÇçÝ³Ù³ëáõÙ	
5.	¾ðº´àôÜÆ	01-005-391-009	µÝ³Ï³í³Ûñ»ñÇ	Ë³éÁ Ï³éáõóապատման	²½³ï³Ù³ñ ï ÇÏÝ»ñÇ ÷áÕ. 4-ñ¹ Ýñµ³ÝóùÇ – ²½³ï³Ù³ñ ï ÇÏÝ»ñÇ ÷áÕ. 5-ñ¹	

6.	¾ð º ´ àôÜÆ	01-005-637-176	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	² í ³ Ý»ëáíÇ ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
7.	¾ð º ´ àôÜÆ	01-005-237-1021	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման.	´ áõéÝ ³ ½Ù ³ Ý ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
8.	¾ð º ´ àôÜÆ	01-005-559-042	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	Ê ³ Õ ³ Õ ¸ áÝÇ ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
9.	¾ð º ´ àôÜÆ	01-005-339-015	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	Üáñ ² ñ»ßÇ 24 - ñ¹ ÷áÕáóÇ – Üáñ ² ñ»ßÇ 26 - ñ¹ ÷áÕáóÇ ÙÇçÝ ³ Ù ³ ëáõÙ	
10.	¾ð º ´ àôÜÆ	01-005-201-003	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	øñÇë ï ³ ÷áñÇ ÷áÕngÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
11.	¾ð º ´ àôÜÆ	01-005-345-084	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	Üáñ ² ñ»ßÇ 11-ñ¹ ÷áÕáóÇ – Üáñ ² ñ»ßÇ 24-ñ¹ ÷áÕáóÇ ÙÇçÝ ³ Ù ³ ëáõÙ	
12.	¾ð º ´ àôÜÆ	01-005-128-001	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	ê ³ ëáõÝóÇ ¸ ³ íÃÇ ÷áÕngÇ – ² ½ ³ ï ³ Ù ³ ñ ï ÇÏÝ»ñÇ ÷áÕáóÇ ÙÇçÝ ³ Ù ³ ëáõÙ	
13.	¾ð º ´ àôÜÆ	01-005-121-037	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	¸ ³ íÇÃ ´ »ÏÇ ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
14.	² ð ² ´ ÎÆð	01-003-224-012	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	Ü. ¼ ³ ñÙ ³ ÝÇ ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
15.	² ð ² ´ ÎÆð	01-003-135-127	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	äéáßÙ ³ Ý ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
16.	² ì ² Ü	01-002-002-142	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	Ø ³ ñß ³ É ´ ³ µ ³ ç ³ ÝÙ ³ ÝÇ ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
17.	² ì ² Ü	01-002-022-002	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	² .Þ ³ ÑÇÝÙ ³ ÝÇ ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
18.	Î ºÜ î ðàÜ	01-006-001-001	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	² Ý ï ³ é ³ ÛÇÝ ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
19.	Î ºÜ î ðàÜ	01-006-987-002	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	Üàð ² ¶ÚàôÔ Ã ³ Õ ³ Ù ³ ëÇ – Ìáí ³ Ï ³ É Æë ³ ÏáíÇ åáÕá ï ³ ÛÇ ÙÇçÝ ³ Ù ³ ëáõÙ	
20.	Î ºÜ î ðàÜ	01-006-247-038	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	úë ï ñáíëÏáõ ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
21.	Î ºÜ î ðàÜ	01-006-240-1002	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	Ü ³ ñ-¸ áëÇ ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
22.	Î ºÜ î ðàÜ	01-006-1097-001	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	Øáíë»ë Êáñ»Ý ³ óáõ ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
23.	Î ºÜ î ðàÜ	01-006-313-119	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	Êáñ»Ý ³ óáõ ÷áÕ.2-ñ¹ Ýñµ. – Øáíë»ë Êáñ»Ý ³ óáõ ÷áÕáóÇÝ	

24.	Î ºÜî ðàÜ	01-006-313-118	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	Êáñ»Ý ³ óáõ ÷áÕ.2-ñ¹ Ýñµ., Øáíë»ë Êáñ»Ý ³ óáõ ÷áÕáóÇ – îÇ·ñ ³ Ý Ø»ÍÇ åáÕá ï ³ ÛÇ ÙÇçÝ ³ Ù ³ ëáõÙ	
25.	Î ºÜî ðàÜ	01-006-313-117	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	Êáñ»Ý ³ óáõ ÷áÕ.2-ñ¹ Ýñµ., Øáíë»ë Êáñ»Ý ³ óáõ ÷áÕáóÇ – îÇ·ñ ³ Ý Ø»ÍÇ åáÕá ï ³ ÛÇ ÙÇçÝ ³ Ù ³ ëáõÙ	
26.	Î ºÜî ðàÜ	01-006-313-120	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	Êáñ»Ý ³ óáõ ÷áÕ.2-ñ¹ Ýñµ., Øáíë»ë Êáñ»Ý ³ óáõ ÷áÕáóÇ – îÇ·ñ ³ Ý Ø»ÍÇ åáÕá ï ³ ÛÇ ÙÇçÝ ³ Ù ³ ëáõÙ	
27.	Î ºÜî ðàÜ	01-006-716-024	³ ñ¹ÛáõÝ ³ µ»ñ ³ Ï ³ Ý	Արդյունաբերական օբյեկտների	Ìáí ³ Ï ³É Æë ³ ÏáíÇ åáÕá ï ³ – Â ³ ÇñáíÇ ÷áÕáóÇ ÙÇçÝ ³ Ù ³ ëáõÙ	
28.	Î ºÜî ðàÜ	01-006-232-072	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	ø ³ ç ³ ½ÝáõÝáõ ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
29.	Î ºÜî ðàÜ	01-006-529-011	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	ö ³ íë ï áë ´ áõ½ ³ Ý ¹Ç ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
30.	Î ºÜî ðàÜ	01-006-529-019	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	ö ³ íë ï áë ´ áõ½ ³ Ý ¹Ç ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
31.	Î ºÜî ðàÜ	01-006-061-042	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	ØÛ ³ ëÝÇÏÛ ³ Ý åáÕá ï ³ ÛÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
32.	Î ºÜî ðàÜ	01-006-061-048	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	ØÛ ³ ëÝÇÏÛ ³ Ý åáÕá ï ³ ÛÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
33.	Î ºÜî ðàÜ	01-006-061-049	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	ØÛ ³ ëÝÇÏÛ ³ Ý åáÕá ï ³ ÛÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
34.	Î ºÜî ðàÜ	01-006-529-023	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	ö ³ íë ï áë ´ áõ½ ³ Ý ¹Ç ÷áÕáóÇ– ² ñ ³ ÙÇ ÷áÕáóÇ ÙÇçÝ ³ Ù ³ ëáõÙ	
35.	ø ² Ü ² ø º è-¼ºÚÂàôÜ	01-012-020-063	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	ø ³ Ý ³ ù»éÇ 12-ñ¹ ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
36.	ø ² Ü ² ø º è-¼ºÚÂàôÜ	01-012-020-054	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	ø ³ Ý ³ ù»éÇ 12-ñ¹ ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
37.	ø ² Ü ² ø º è-¼ºÚÂàôÜ	01-012-222-027	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	Ø. ² í » ï ÇëÛ ³ ÝÇ 2-ñ¹ ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
38.	ø ² Ü ² ø º è-¼ºÚÂàôÜ	01-012-111-058	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	ø ³ Ý ³ ù»éÇ 12-ñ¹ ÷áÕ. ³ Ýó.,ø ³ Ý ³ ù»éóáõ ÷áÕ. 4-ñ¹ Ýñµ.,ø ³ Ý ³ ù»éÇ 8-ñ¹ ÷áÕáóÇÝ – ø ³ Ý ³ ù»éÇ 9-ñ¹ ÷áÕ.ÙÇçÝ ³ Ù ³ ëáõÙ	
39.	ø ² Ü ² ø º è-¼ºÚÂàôÜ	01-012-020-048	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	ø ³ Ý ³ ù»éÇ 12-ñ¹ ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
40.	ø ² Ü ² ø º è-¼ºÚÂàôÜ	01-012-020-051	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	ø ³ Ý ³ ù»éÇ 12-ñ¹ ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
41.	ø ² Ü ² ø º è-¼ºÚÂàôÜ	01-012-020-082	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	ø ³ Ý ³ ù»éÇ 12-ñ¹ ÷áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	

	Þ ºU¶ ² ì ÆA	005-152	µY ³ I ³ í ³ Ûñ»ñÇ	I ³ éáõóապատման	ï ³ ñ ³ ðù	
43.	Þ ºÜ¶ ² ì ÆÂ	01-011-523-048	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	² ñó ³ ËÇ å áÕá ï ³ ÛÇ – ² ñÇÝ-´ »ñ¹Ç ÷ áÕngÇ ÙÇçÝ ³ Ù ³ ëáõÙ	
44.	Þ ºÜ¶ ² ì ÆÂ	01-011-130-126	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	Þ ³ ñáõñÇ ÷ áÕáóÇ,ÞÇñ ³ ÏÇ ÷ áÕáóÇ – ² ñ ³ ñ ³ ï Û ³ Ý ÷ áÕáóÇ ÙÇçÝ ³ Ù ³ ëáõÙ	
45.	Þ ºÜ¶ ² ì ÆÂ	01-011-118-211	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	Ծիրակի փողոցին հարող տարածք	
46.	Üàð Üàðø	01-008-617-013	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	Üáñù 2 ÷ áղáóÇ – ¶Ûáõñçû ³ Ý ÷ áÕáóÇ ÙÇçÝ ³ Ù ³ ëáõÙ	
47.	Üàðø-Ø ² ð ² Þ	01-009-082-032	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	Üáñù 2-ñ¹ ÷ áÕáóÇ Ýñµ ³ Ýóù Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
48.	Üàðø-Ø ² ð ² Þ	01-009-082-021	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	Üáñù ÷ áÕáóÇ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
49.	Üàðø-Ø ² ð ² Þ	01-009-023-049	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	¶.Ðáíë» ÷ Û ³ ÝÇ ÷ áÕáóÇÝ Ñ ³ ñáÕ ï ³ ñ ³ ðù	
50.	Üàðø-Ø ² ð ² Þ	01-009-023-059	µÝ ³ Ï ³ í ³ Ûñ»ñÇ	Ë ³ éÁ Ï ³ éáõóապատման	¶.Ðáíë» ÷ Û ³ ÝÇ ÷ áÕáóÇ – ÜáñùÇ 8-ñ¹ ÷ áÕáóÇ ÙÇçÝ ³ Ù ³ ëáõÙ	

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանին որոշում է ընդունում Երևանի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը, ընդ որում՝ հողամասերի օտարման տարեկան ծրագրի մեջ պետք է նշվեն նաև հողամասերի գտնվելու վայրը, ծածկագրերը, Երևանի գլխավոր հատակագծով սահմանված նպատակները և օտարման եղանակները:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝Երևանի քաղաքապետն ավագանուն է ներկայացնում Երևանի սեփականություն համարվող գույքը օգտագործման տրամադրելու և օտարելու տարեկան ծրագիրը, դրան համապատասխան՝ տնօրինում է Երևանի սեփականություն համարվող գույքը:

Նախագիծը մշակվել է վերը նշված օրենքի պահանջները կատարելու նպատակով: Նախագիծը մշակելիս հաշվի են առնվել Երևան քաղաքի ավագանու կողմից նախորդ տարիներին ընդունված Երևանի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2010-2018 թվականների ծրագրերի դրույթները և իրավակիրառ պրակտիկայում առաջացած խնդիրների լուծման անհրաժեշտությունը:

Ի տարբերություն նախորդ տարիների ծրագրերի, սույն նախագծով նախատեսվում է սահմանել հողամասերի վարձակալության վարձավճարներ բջջային կայանով, ալեհավաքով, բանկոմատով, տերմինալով, ծաղիկների վաճառքի կետով, սառնարաններով և դիսպենսերներով զբաղեցված հողամասերի համար, ինչպես նաև կառուցապատման իրավունքով տրամադրման վճար՝ բջջային կայանով, ալեհավաքով, բանկոմատով զբաղեցրած հողամասերի համար: Նախագծով սահմանվել է նաև համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ կառուցված և համայնքի ղեկավարի որոշման հիման վրա օրինական ճանաչված ավտոտնակները վարձակալությամբ տրամադրելու դեպքում վարձավճարի չափը: Ծրագիրը լրացվել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում չներառված հողամասերով, որոնք ընդգրկված չեն եղել նախորդ ծրագրերում:

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2019 թվականի ծրագրի վերաբերյալ» որոշման նախագծի ընդունումը նպատակաուղղված է համայնքային սեփականության օբյեկտների՝ հողամասերի, բնակարանների, ոչ բնակելի տարածքների, շենքերի և շինությունների, ինքնակամ կառույցների և այլ անշարժ ու շարժական գույքի, այդ թվում՝ համայնքային կառավարչական հիմնարկներին և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի, այլ համայնքային գույքի արդյունավետ կառավարմանը, համայնքային գույքի տնօրինման և օգտագործման գործընթացի կանոնակարգմանը, գույքի օգտագործումից գանձվող վարձավճարների, կառուցապատման վճարների դրույքաչափերի մոտեցմանը շուկայում ձևավորված դրույքաչափերին, քանդման ենթակա վթարային բազմաբնակարան և հանրակացարանային շենքերի բնակիչների վերաբնակեցման խնդիրների լուծմանը և այլն:

ներկայացվել է փորձաքննության Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, որտեղից ստացվել է պետական փորձագիտական եզրակացություն այն մասին, որ նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Նախագծի ընդունմամբ կապահովվի Երևանի սեփականություն համարվող գույքի տնօրինման լիազորության իրականացումն Երևանի քաղաքապետի կողմից,որի արդյունքում կապահովվի Երևան համայնքի բյուջեի մուտքերը:

Նախագիծը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու եւ օտարման 2019 թվականի ծրագրի վերաբերյալ» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու եւ օտարման 2019 թվականի ծրագրի վերաբերյալ» որոշման նախագծի ընդունման կապակցության Երևանի բյուջեի եկամուտներում սպասվում են էական մուտքեր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ